

դէնքերու գերազանցութիւնը ի վեր հանէ եւ ասով համաձայնութեան վերջին արգելքն ալ բառնայ: Իրբեւ կուսակալ Կապադովկիայի եւ Գաղատիայի՝ Ասիա գտնուող հռոմէական բովանդակ բանակներու վրայ վերին հրամանատար կարգուեցաւ եւ Ասիայի բոլոր կուսակալները հրահանգ ստացան իր զինուորական հրամաններուն հետեւելու¹⁰⁵: Վեց լեգէոններուն վրայ, որոնք արդէն իր նոր հրամանատարական սահմանին մէջ կը գտնուէին, աւելցան զեռ մեծ ուժախմբումներ. Պանոնիայէն ամբողջ լեգէոն մը՝ ԺԵ. Ապոլինարեանը, արեւելք փոխադրուեցաւ: Բաց աստի արեւելեան բանակին տրուեցան Իլլիրական միւս չորս՝ եւ եգիպտական երկու լեգէոններէն պահեստի գունդերը՝ որոնք հաւանօրէն լեգէոնի մը ամբողջութիւնը կը կազմէին¹⁰⁶: Կորբուզոն այս ուժեղ բանակը, որ կանոնաւոր գունդերու տեսակէտով՝ Հռոմոսի բանակին կը հաւասարէր, երկու խումբի բաժնեց: Եփրատի սահմանի պահպանման համար Ասորիքի նոր կուսակալին, Կ. Կեստիոս Գաղոսի յանձնեց Էրեք լեգէոն՝ կիրթ Ժ. Փրետենեան եւ Պետոսի երկու լեգէոնները Գ. Սկիւթականը եւ ԺԲ. Շանթահարը. իսկ ինքը 62ի ամառը եւ յաջորդ ձմեռը Մելիտինէի մէջ հզօր յարձակողական բանակ մը համախմբեց¹⁰⁷. Հոս հաւաքեց Ասորիքէ եւ Պոնտոսէ նախ Գ. Գաղղիականը, Ե. Մակեդոնականը եւ Զ. Երկաթապատը. յետոյ ասոնց վրայ աւելցան Պանոնիայէն՝ ԺԵ. Ապոլինարեանը եւ Իլլիրիայի եւ Եգիպտոսի ընտրեալ գունդերը: Արեւելքի հպատակ թագաւորները իրենց ուժերով ամբողջացուցին բանակը, որ առ նուազն 60.000 զինուոր ունեցած ըլլալու է¹⁰⁸: 63ի զարնան Հայաստան արշաւելու համար ամէն բան կազմ եւ պատրաստ էր¹⁰⁹: Պարթեւը նոր կացութենէն անմիջապէս անհրաժեշտ հետեւութիւններն հանեց: Կը յուսար թէ իր յանկարծական յաղթանակին ազգեցութեան ճնշումով հռոմէական զերիշխանութեան կերպական ճանաչումովը պիտի գերծանէր, սակայն երբ Հռոմ որոշած

¹⁰⁵ Տակ. Տ. ԺԵ. 25. Հրամանատարութեան նկարագրի մասին տես Գլ. Գ, յօդ. 1:
¹⁰⁶ Իւրաքանչիւր լեգէոնէն սովորաբար 1000 անձ, որեմն հոս ընդ ամէնը 6000 հոգի:
¹⁰⁷ Սպառազինուումներն եւ փոխադրութիւնները սյարան երկար ժամանակի կարօտ էին: Տես Klio ԺԹ:
¹⁰⁸ Տակ. Տ. ԺԵ. 26:
¹⁰⁹ Գիտնի մօտ կայսեր արեւելքի ուղեւորութենէն եւ կինայը սխալմամբ ասոր հետ կապուած է:

էր այսպիսի ստուար ուժերու համախմբումով կոխել վերսկսիլ, այլ եւս այդ նպատակին հասնիլ կարելի չէր: Կորբուզոն դարձեալ ոսկի յոյսեր տուաւ անոր եւ արշաւ սկսելու վայրկեանին անգամ մը եւս ծանօթ պահանջներն դրաւ¹⁰¹: Ասոր վրայ մեծ արքան որոշեց ընդունիլ այն պայմանները, որոնց հետ Հռոմ Տրդատի ճանաչումը եւ խաղաղութիւնը կը կապէր: Ոչ թէ պարթեւ ազգերնաւորներ, այլ մեծ արքային եւ անոր հայ գահին հետամուտ եղբորը պատգամաւորներն էին որ դիմաւորեցին լեգէոնները, երբ ասոնք ստորին Արածանիի հովիտէն Հայաստան կը մտնէին¹¹¹: Կորբուզոն անոնց բանազնացներ ընկերացուց, որպէս զի խաղաղութեան պայմանները սահմանաւորեն: Տրդատ Հայաստանի թագաւոր պիտի ըլլար, եթէ նա Հռոմ երթալով կայսեր ձեռքէն կուէր դաշնակցութիւն մը, որ իրեն պիտի տար խաղաղութիւնը եւ հանգստութիւններէն բոլոր դժուարութիւններու յաղթել կարենալու համար: Բանակցութիւններու միջոցին այս անգամ զինադադար չչնորհուեցաւ¹¹²:

Վաղարշի պատասխանը նպաստաւոր եղաւ եւ զինադադար ինչքեց: Տրդատ հռոմէացի զօրավարին աղաչեց, որ նշանակէ տեսակցութեան ժամը եւ վայրը: Ռանդէայի մէջ, ուր Պետոս հռոմէական զէնքերն այնքան ծանրապէս արատաւորած էր, տեղի ունեցաւ պատմական հանդիպումը¹¹³: Կորբուզոնի օգնականը Տի. Յուլիոս Աղեքսանդր եւ կուսակալին փեսան Աննիոս Վինիկիանոս իրբեւ պատանդ հայ բանակը դացին, որպէս՝ զի երաշխաւորեն թագաւորին ապահովութիւնը՝ անոր հռոմէական բանակին մէջ գտնուած ժամանակ: Հոն՝ Պարթեւաց արքային եղբայրը կայսեր պատկերին ստջեւղետեղեց հայկական արքայախոյրը եւ խոստացաւ այլ եւս չկրել դայն, մինչեւ որ Հռոմի մէջ կայսեր ձեռքէն իսկ ընդունէր թաղը: Տրդատին դուստրը դաշինքին պահպանումին դրաւ արուեցաւ, եւ դաշինքին կնքումը ծանուցուեցաւ կայսեր իր նոր հպատակին խո-

¹¹⁰ Գիտն ԿԲ. 23, 1. հակառակ Տակ. Տ. ԺԵ. 27:
¹¹¹ Տակ. Տ. ԺԵ. 27:
¹¹² Այս ամբողջ ընթացքը կը ցուցնէ, թէ Կորբուզոն այս անգամ քաղաքական խիստ հրահանգներ ունէր եւ անոնց կը հետեւէր:
¹¹³ Տակ. Տ. ԺԵ. 28-31:

նարհական մէկ գրութեամբը: Յետոյ Տրդատ հեռացաւ Երկրէն, պարթեւական հայրենիքին մէջ հպատակութեան ցոյցի ճամբորդութեան պատրաստութիւնները տեսնելու համար: Կորբուզոն իր լեգէոններով Ծովքի մէջ մնաց, ուր Գ. Գաղղիականը 64 տարուայն մէջ միջնաբերդ մը կանգնած է: Պարթեւը ի հայ մատուռի մը մէջ գտնուած երբեք չէր հայ մատուռի մը մէջ կենդանի վիակու արձանադրութիւնները¹¹⁴ կենդանի վիակուներ են որ հռոմէական զինուորական ոյժը հոս վերստին տեսականօրէն ամբացած մեծ 64 տարուայ գարնան Կորբուզոն մեծ արքային հետ հանդիպում մը ունեցած է¹¹⁶: Թէեւ Տակիտոս կը հաղորդէ միայն, թէ այդ տեսակցութեան ժամանակ Տրդատի Հռոմ ուղեւորութեան ձեւականութիւններն սահմանուեցան, եւ թէ անոր հռոմէական պետութեան մէջ գտնուած միջոցին հիւպատի ստիճան շնորհուեցաւ¹¹⁷, սակայն ինք աստիճան շնորհուեցաւ՝ Հռոմի եւ նայստ է որ այդ հանդիպումին կնքուեցաւ: Տիգրանի մէջ խաղաղութիւնը կնքուեցաւ:

Այսպէս տասը տարուան տաժանելի հախտանքէ վերջը Հռոմ իր նպատակին հասած էր: Պարթեւ արքան վերահաս եղած էր, թէ հռոմէական զրացուցն հետ խաղաղական համաձայնութիւն մը եւ հայ երկրին համաձայնութեան բաժանումը, քաղաքավրայ ազգեցութեան բաժանումը, քաղաքական այդ կենդրոնական հարցին՝ ամենաշահաւէտ լուծումն էր նոյն իսկ իր պետութեան համար: Տրդատի՝ Հռոմէական կայսեր առջեւ 66ի ամառը ըրած հպատակութեան ցոյցը, արեւելեան քաղաքականութեան նոր դարաշրջան մը բացած է, որ թեան նոր դարաշրջան մը բացած է, որ թէեւ կէս դար յետոյ Տրայանոսէ ընդմիջուեցաւ, սակայն անոր արկածախնդրութենէն յետոյ դարձեալ վերսկսաւ:

(Շարունակելի): թ՛յ գլ. 4. Մ. ՀԱՊՈՋԵԱՆ

¹¹⁴ CIL, III. 6741/42. Desau 232:
¹¹⁵ Տես Գլ. Գ, յօդ. 1:
¹¹⁶ Գիտնի ժամանակադրութեան մէջ պարթեւական մարտին զրաւած տեղէն յայտնի կ'երեւայ ժամանակը. տես Klio ԺԹ:
¹¹⁷ Տակ. Տ. ԺԵ. 31:

ՍԿԵՒԹԱՅԻ ԱՆԵՏՈՐԱՆԸ 1197 ԹՈՒՆՎԱՆԵՆ ԼՂՈՂԻ ՀՐԵ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍԱՐԱՆԻ ԳՐԵԳՈՐԱՆԵՆԻ ՄԷՋ

(Նստատ մը հայ մանրանկարչութեան պատմութեան):
 (Շարունակելի):


4. Մեր նկարները:

- Թ. 1—5 Համաբարբառի խորաններու մանրանկարներն են: Կը ներկայացնեն՝
- Թ. 1. Եւսեբեայ առ Կարպիանոս ընծայականին սկիզբը (թղ. 1).
- Թ. 2. Կանոն Բ. (չար.) եւ Գ. (թղ. 5).
- Թ. 3. Կանոն Ե. (չար.) եւ Զ. (թղ. 7).
- Թ. 4. Կանոն Է. եւ Ը. (թղ. 8).
- Թ. 5. Կանոն Թ. եւ Ժ. (թղ. 9):

Մեր հրատարակութենէն կը բացակային այժմ Համաբարբառի խորաններէն Եւսեբեայ թղթին շարունակութիւնը (թղ. 2). Համաբարբառի Ա., Բ. (թղ. 3 եւ 4), Գ. եւ Ե. (թղ. 6) կանոնները եւ Ժ. կանոնին մնացորդը (թղ. 10): Այս նկարներէն թղ. 3, 5, 8, 9 հրատարակած է Frédéric Macler, ի թերթին Revue des Etudes arméniennes, VII, էջ 95—107, ուր տուած է Macler նաեւ Յիշատակարաններուն նմանահանութիւնը: Այս աշխատութիւնը անտեսուած էր մեր նախորդ յօդուածին մէջ: Մթանչելի արուեստով հիւսուած են խորաններս. ուր բազմահար նկարչին նուրբ վրձինը ստեղծած է բազմակերպ զարդածներ, ձեւեր, ճարտարապետական շարժագծեր, խճողած է ամենազգի բուսական, կենդանաբանական եւ երկրաչափական զարդարանքներ, շոյլած է առատօրէն ոսկի եւ նարոտ, որպէս զի ձեւերու եւ երանգներու բազմազանութեամբ հանդերձաւորէ Համաբարբառը ներու չոր ու ցամաք բովանդակութիւնը եւ խօսուն պատկերներով կարկառուն ընծայէ անոր իմաստին եւ խորհրդոյն բարձրութիւնը: Ամէնէն յառաջ իրենց կը ձգեն մեր ուղեւորութիւնը զարդարանքներու լայնանիստ զաւտերը. հարուստ է հոն բուսական աշխարհը, ճոխ երանգաւորումները. դէպ է խարճը, ճոխ հրապուրուին օդաւրաց թռչունները հոն կը հրապուրուին սողունները. որոնք երամուս եւ երկրաքարը սողունները. իրենց ներկայութիւն իջած են, ճոխացնելու իրենց ներկայութեամբ տեսարանը: Հանդիսատես են նաեւ մարդակերպ եւ գազանազէմ կերպարանքներ: Նկար 1. Երկու ուղղաձիգ սիւներու վրայ ձգուած է հորիզոնական՝ գերանաձեւ զոյժ (քովթար, architrave), որուն վրայ կառուցուած է կիսախորանը, պայտածեւ կառուցուած է բազմազան զարդագոտիներով: մարներով եւ բազմազան զարդագոտիներով: Միջին կամարին մէջ պատարիճներու վրայէն Միջին կամարին մէջ պատարիճներու վրայէն կը սողան վիշապազգիներ. վերին կամարին

վրայ, կիսախորանին երկու եռանկյուններու մէջ կ'երեւան դարձեալ մի մի վիշապներ, այս անգամ դալարուած տտուններով, որոնք նոյնպէս կը սողան խոտերու վրայէն: Կիսախորանին վրայ ներկայացուած են երկու սիրամարդներ, որոնց իրարու դալարուած պարանոցները ունին իրենց մէջ խաչի մը սիւնը եւ կտուցները կը շօշափեն քառանկյունի խա-

կու ծայրերը կը բարձրանան մի մի արմաւենիներ, որոնց վրայ թառած են թռչուններ: Սորանի կազմութեան հիմնական ձեւը յընդհանուրն ուրուագիծը եղած է նաեւ յաջորդ խորաններուն, ուր փոփոխութեան ենթարկուած են միայն եզերածառերը (արմաւենի, նոնենի, որթատունկ), սիւներու եւ խոյակներու պատկերը եւ կիսախորանին բո-



Նկար. 6. Սկեւոսի Աւետարան, 1197. Մատթէոս Աւետարանիչ:

չին ստորին թեւը: Սաչին սիւնը ունի իբրեւ խարխիս աստիճանաւոր պատուանդան: Կիսախորանին ամէնէն վարի կամարին մէջ կը տեսնուի կիսանդրի մը հոռոմէական ձորձով, որ ձախով բռնած է մագաղաթեայ թուղթ մը «Յւսեբի Կարպիանոսի» ընթերցուածով, եւ աջ թեւը կիսամերկ կարկանաւծ է՝ ձեռքին փրփրազէզ բաժակ մը: Սիւները ունին ահանթաղարդ խոյակներ, խարխիսի հեծանին, ինչպէս եւ քովթարին եր-

վանդակութիւնը: Պիտի նկարագրեմ զանոնք աւելի համառօտ գծերով:
Թ. 2. Երեք արծուազարդ խոյակներով սիւներ կը կրեն իրենց վրայ քովթարը: Ասոր վրայ հանգչած է կիսախորանը իւր պայտաձեւ կամարով եւ զարդագօտիներով: Կիսախորանին վրայ որթատունկի երկու բարուտուանդանի տակէն, կը հովանաւորեն երկու

աղանեակներ, որոնք կանգնած են օդի մէջ եւ կը նային դէպի ծաղկաման:
Թ. 3. Առիւծադէմ գլուխներով են խոյակները. կիսախորանի դաշտը առիւշեղ եւ ուղղածիգ կը կարեն երեք գերանաձեւ ստեղներ. պայտաձեւ կամարը ձգուած է երկու առիւշեղ ստեղներու վրայ, երրորդ՝ ուղ-

րանեղոյն եւ գունավառ կամարներով եւ զարդագօտիներով:
Թ. 6. Մատթէոս Աւետարանիչ, սպիտակահեր, սպիտակ պարեգօտով (toga), բազմած թիկնաթոփ վրայ. աջ ոտքը կը հանգչի պատուանդանին. ձախ ծունկին վրայ ձախ ձեռքով բռնած է Աւետարանը: Աջ



Նկար. 7. Սկեւոսի Աւետարան, 1197. Մարկոս Աւետարանիչ: heating hiti

դածիգ ստեղնը կ'անցնի կամարի վրայէն: Ամբողջ դաշտը ծաղկազարդ է եւ բուսաշատ: Կիսախորանի վրայ կը տեսնուի ծաղկաման մը եւ առջեւը տաշտ մը, ուսկից երկու քաղաղներ ջուր կը խմեն:
Թ. 4. Շատ նման է նախորդին:
Թ. 5. Երեք բարձրաքանդակ գարդերով եւ բուսական խոյակներով սիւները կը կրեն իրենց վրայ կիսախորանը, պայտաձեւ, ծի-

ձեռքը յեցած ճիւղին խորհրդալից սեւեռած աչքերով կը նայի մագաղաթեայ շերտին որ հանդիպակաց գրակալի վրայ կախուած է արձակ ծայրերով: Աջ կողմը եւ դիմացը ունի երկու դարակներ. աջ կողմինը երեք աչքով է, երրորդին մէջ կը տեսնուին առարկաներ, համարեւ զալարածոյ մագաղաթներ: դահանգին վրայ կան թանաքամաններ: Հանդիպակաց դարակը երկու աչքով է, երկրորդը պակաս դարակը երկու աչքով է, երկրորդը

կէս բոլորակ կամարով, կը պարունակէ երկու կուժ, առաջնոյն մէջ կը տեսնուին առարկաներ: Դարակին վրայ զետեղուած է մկրատ մը: Ասոր ետեւն է գրակալը, որուն պտուտակաւոր ձողի ծայրը առած է ձուկ մը բեռնին մէջ եւ դէպ ի վեր առիչեղ տարածուած տտունով կը բռնէ գրակալը: Սենեակի խորքը՝ ձախ կողմը պատուհանի մը

բու վրայ. ներկայացուած է ոչ երկար թխահեր մագերով եւ մօրուքով: Աչքերը սեւեռած է հանդիպակաց գրակալին վրայ բացուած գրքի մը: Գրակալը վեր կը բռնէ ձուկ մը տտունով, իսկ բերնով ամուր խածած է պտուտակածեւ ձող մը, որ ամբացած կ'երեւայ գետնի վրայ: Գրակալին առջեւ կայ պահարան մը խաչածեւ քանդակով, ուր կը



Նկար. 8. Սկեւոյի Աւետարան, 1197. Սկիզբն Մարկոսի:

վերի կէս մասը կը նկատուի, քանդակազարդ շրջանակով: Ձեղունին վրայ հանգրքուած է վարագոյր մը. թէ յատակն եւ թէ ձեղունը ներկայացուած է զորդազարդ, պատերը կ'երեւցնեն իրենց վրայ սկանթածեւ գարգեր:

Թ. 7. Մարկոս Աւետարանիչ, թիկնաթուի վրայ դէպի առաջ միտած կը գրէ գրքի մը մէջ, զոր բռնած է ձախ ձեռքով ծունկի-


տեսնուին եւ այլ բարձրակարգ քանդակազարդեր. պահարանիս վրայ կայ արեւելեան կաղամար: Սենեակի խորքը շինուածք մը կը բարձանայ եռանկիւնի նիշով եւ տանիքով, որուն ներքեւ պատուհան մը քանդակազարդ շրջանակով: Դրան հանգրձուած է վարագոյր մը: Նկարը եզերուած է զարդարուն շրջանակով:

Թ. 8. Մարկոսի սկիզբը. կիսախորանին

զաշտը կը ծածկեն որթատունկի բարունակները, որոնք բազմապտոյտ ուրբուններով կը կազմեն զարդածեւեր: Կենդրոնին աջ եւ ձախ կէտերու վրայ երկու թռչուններ կը կոցահարեն ողկոյղը. կան ուրիշ երկու թռչունահարեն ողկոյղը. կան ուրիշ երկու թռչուններ ալ կիսախորանին երկու ծայրերը, նստած ճիւղերու վրայ: Խորանին վրայ ներստած ճիւղերու վրայ: Խորանին վրայ ներկայացուած են. աջ՝ երկու զաղաններ, որոնք

կոխած է լուսեպսակ անմօրուս երիտասարդ մը (Մարկոս) երկու ձեռքերով բռնած առիւծին թեւերը: Լուսանցքին վրայ կը տեսնուի ծաղկազարդ մը, որմէ կ'ընձիւղի խաչ մը:

Թ. 9. Ղուկաս Աւետարանիչ. նիհարազէմ, կարճ սպիտակ մօրուք եւ մագերով, բազմած է բարձր թիկնաթուի վրայ, ձախով



Նկար. 9. Սկեւոյի Աւետարան, 1197. Ղուկաս Աւետարանիչ:

խածած են իրարու զիտերը. ձախ՝ թռչնազգի մը կենդանակերպ. երկուքին մէջ տեղը կը տեսնուի հիւսկէն բոլորակ զարդ մը, կենդրոնին ծաղիկ: Մարկոսի խորհրդանիշը՝ թեւաւոր առիւծը ներկայացուած է «Ս» գրին մէջ. առիւծը նստած է, թեւերը մէջքէն փորի տակով կ'անցնին եւ աջ եւ ձախ կողմէն կը բարձրանան, կազմելու համար «Ս» գրին սիւները: Առիւծին կոնակը եւ զլուխը


բռնած գիրք մը ծունկերուն վրայ, իսկ աջ ձեռքը միտած դէպի կաղամարը որ կը գրատեղի դիմացը պահարանի մը վրայ: Անոր նուրի դիմացը է գրակալ մը, զոր կը բռնէ քով կանգնած է գրակալ մը, զոր կը բռնէ պտուտակածեւ ձող մը ամբացած պահարանին ետեւը: Գրակալին կախուած է մագաղաթեայ շերտ մը զալարուն վերջքով: Գրակալին առջեւը գետեղուած է պահարան մը կրկին փեղկերով. փեղկերէն մին բաց է. ունի

երկու աչքեր, որոնց մէջ կը տեսնուին մի մի կուժեր: Սենեակին խորքը կայ հովանաւոր աշտարակ մը պատուհանով: Առաստաղին հանգրձուած է երկու օղակներէ՝ վարագոյր մը նաշխուն եղերքով եւ միջնագարդերով: Երկու կողմերը շղթայագործ շրջանակներ:

Թ. 10. Յովհաննէս Աւետարանիչ. ոտքի

տակածե զլանի վրայ ամբայցած. եւ սեղան մը՝ վրան թանաքաման: Սենեակին խորքը կը տեսնուի պատուհան քանդակուած շրջանակով. անոր վրայ մոմ մը (°), որ ականթածեւ ճառագայթներ կ'արձակէ:

Թ. 11. Յովհաննէս սկիզբը: Ուշագրաւ է «Ի» զարդագիրը, որուն սիւնի վերի ծայրի վրայ ներկայացուած է միտալ մը. վրան կի-



Նկար. 10. Սկիւռայի Աւետարան, 1197. Յովհաննէս Աւետարանիչ:

վրայ, ճոխ հանդերձաւորուած ձորձով (toga), բարձրացուցած է ձախ ձեռքը դէպի վեր, ուր վարագոյրի ետեւէն թաթ մը կարկառած է, իսկ ձախ ձեռքը ուղղած է դէպի երիտասարդ մը, որուն կը նայի կիսով եւ դէմքը. Յովհաննէս կը թելադրէ Պրոխորոսին, որ նստած ցած թիկնաթոռի վրայ կը գրէ ձեռքը բռնած գրքին մէջ: Պրոխորոսն ունի իւր սողնեւ գրակալ մը պատու-

սանդրի մը սպիտակամօրուս (Յովհաննէս): Միտալին վրայ կը նկատուի Յովհաննէս խորհրդանշանը՝ Առձիւր, որ կրկնուած է կիսախորանին վրայ:

5. Արուեստը:

Ամբողջին մէջ արեւելեան զարդասիրիկ աշխարհն է որ կը խօսի, հին արեւելեան-

հայկական արուեստը, որ նոր դունաւորմամբ, զարդացած, բարդաւածած կերպարանքի մէջ կը կրկնուի: Հայկական Կիլիկիա, այս նոր հայ դալթականութիւնը, որ հարիւր տարուան կեանք ունէր հաղիւ, իբրեւ ստեղծագործող ի հանդէս չի գար հոս, այլ նա աւանդապահն է հին արուես-

մէջ կը կատարելագործուի: Չէ փոխուած հոն արեւելեան նկարագիրը, չէ տուժած հայկական ոճը, բայց եւ այնպէս նոր է արուեստը, թարմ՝ ճաշակը, կատարելագործուած վրձինի շարժումները. եւ ամբողջին մէջ հայ արուեստի վերածնութեան դարն է որ կը ցցուի:



Նկար. 11. Սկիւռայի Աւետարան, 1197. Սկզբն Յովհաննէս:

տին, սնած Մայր Երկին ճաշակով, նոր միջավայրի մէջ նոր ազդեցութիւններու ենթարկուած, կը ճոխացնէ հայրենի աւանդութիւնները, աւելի վարժ վրձինով, աւելի վառ լոյսերեակայտ յղացումներով: Հայ արուեստը սերով եւ աշխոյժ գոյներով: Հայ արուեստը հայ վրձինի տակ զարթնումի նոր փուլերու

ինչ որ նոյն դարուն Հաղբատ եւ Սանատին եւ Մեծ Հայաստանի այլ կենդրոններ կու տային, օտար չէին Կիլիկիայի համար. բայց ինչ որ կ'արտադրէր Կիլիկիա, նորութիւններ էին Մեծ Հայաստանի համար: Այն տեղ զանդազ զարդացումով կ'ընէր հինը իւր ճառագայտը. հին արուեստի պատկերաւորու-

Թիւնները նկատուած էին կանոնական եւ անոնց կրկնութիւնն էր որ կը դռնացնէր ժամանակի ճաշակը: Շեղումներ եթէ կը նկատուէին տեղ տեղ եւ ժամանակ ժամանակ, անոնք արդիւնքն էին դուրսի ազդեցութեան, եկամուտ վաճառքներու, շրջակայ հայաբնակ քաղաքներու արուեստանոցներէն: Սերաստիա, Կեսարիա, Մելիտինէ, նոյն իսկ Ազրբայճանուպոլիս կային գրչութեան դպրոցներ, ուսկից կը մատակարարուէին արուեստագործ Աւետարաններ Ժ. եւ ԺԱ. դարերուն:

Բայց նաեւ Հայաստանի սահմաններէն ներս ունէին գոյութիւն Գարոնցներ: Ասոնց մէջ առաջին տեղը պէտք է շնորհել Կարսի դպրոցին: Կարուց թագաւորի Արասի որդւոյն Գաղիկ Շահնշահի օրով (1028—1064) մասնաւորապէս նշանաւոր հանդիսացաւ այս Գարոնցը իբրեւ ձեմարան մը իմաստասիրական գիտութիւններու: Գրիգոր Մագիստրոս Գաղիկի արքունիքը կը զրկէր Գրիգոր վարդապետը, որ կը ցանկար զարգանալ իմաստասիրական գիտութիւններու մէջ¹⁵: Այս տեղ հաւաքուած էին պարսիկ, հրեայ եւ արաբ բժիշկներ, եւ առաջին անգամ հոս կը գրուէր հայ բժշկական եւ երկրագործական գրականութեան հիմը¹⁶: Ունինք Կարսի մանրանկարչական արուեստանոցի արտադրութիւններէն սքանչելի նմոյշ մը՝ Գաղիկ Շահնշահի Աւետարանը, որ կը պահուի այժմ Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենադարանին մէջ (Թ. 2556): Անոր յայտնութիւնը կը պարտինք Մեսրոպ եպ. Տէր-Մովսէսեանի¹⁷: Նկարներու հրատարակութիւնը

¹⁵ «Թուղթ Խ. առ Գաղիկ որդի Արասայ յաղագս գիտնական կրօնաւորին Գրիգորի Հնձացուց»: Գրիգոր Մագիստրոսի թղթերը. հրատ. Կ. Կոստանկանց. Աղեքանդրապոլ 1910, էջ 96—98:
¹⁶ Չաբարիայի որդւոյն Բժշկաբանը թարգմանուած Գաղիկի հրամանաւ գտած եմ էջմիածնի Մատենադարանի ձեռագիրներու մէջ: Այս շրջանին թարգմանուած է ուրիշ բժշկական հեղինակութիւններու հետ նաեւ Վաստակոց գիրքը: Այս մասին պիտի խօսիմ ուրիշ առթիւ:
¹⁷ Մեսրոպ եպ. [Տէր-Մովսէսեան], Գաղիկ թագաւորի Աւետարանը. Արարատ 1910, էջ 332—341 եւ 1911, էջ 683—687: Չեռագիրն է 47 x 36 սմ. մեծութեամբ, 480 թուղթ, մագաղաթեայ, բուն մեսրոպեան գրչութեամբ, երկսիւն: Յառաջ կը բերեմ կարեւոր Յիշատակարանները:
 Թղ. 135 բ. Չատացոյ սբոյց Աւետարանիս գիտիչ Շահնշահ զորդին Արասայ յիշեսէրք ի Յիսուս Քրիստոս: (Նոյնը նաեւ 222 բ.):
 Թղ. 371 բ. Չատացոյ արքայ Աւետարանիս գիտիչ Շահնշահ զորդին Արասայ եւ գիտորհուրտ թագուհի եւ զՄարեմ յիշես...:
 Կարսի թագաւորութիւնը սկսած է 961ին եւ տեւած է մինչեւ 1064: Վերջին թագաւորն էր Գաղիկ որդի Արասայ, որ իշխեց 35 տարի: Երբ Անին ինկու Յունաց, յետոյ Պարսից ձեռքը, ստիպուեցաւ նաեւ Գաղիկ, հեանելով Վասպուրականի Սենեքերիմ թագաւորի օրինակին, ապաստանարան խնդրել Տուրկիմ կայսրէն: Կայսրը տուաւ իրեն Փոքր Ասիայի մասնաւոր բերքը՝ Ամասիա, Կոմանա եւ Լառիսա քաղաքներով, ուր եւ անցուց Գաղիկ կեանքին վերջին օրերը:

տուած է զրեթէ ամբողջութեամբ Ա. Չոպանեան¹⁸:

Արեւելեան արուեստանոցներու արտադրութիւնները ճանապարհ ըրին յետոյ դէպի հարաւ եւ հասան մինչեւ Կիլիկիա, հայ կաթողիկոսարանին գոյքերուն հետ: Մանօթ է Գրիգոր Արկուռեցոյ նկարապարզ Աւետարանը որ գրուած եւ ծաղկուած է 1066ին Սերաստիա, եւ ապա սեպհականութիւնն եղած է Ներսէս Շնորհաւոյ:

Չեռագրիս մանր նկարապարութիւնը տուած է Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեան (Նախնեաց յիշատակներ, Արարատ, 1910, էջ 77—87, 245—260): Որովհետեւ շատ կարեւոր ձեռագիր մըն է այն մեր Աւետարանի պատմութեան լուսարանութեան համար, հարկ կը զգամ համառօտիւ ներկայացնել հոս անոր նկարապարութիւնը:

Էջմիածնի Մատենադարանի Թ. 369, Աւետարան. Թուղթ՝ 281: Մեծութիւն՝ 23 x 15 սմ.: Նիւթ՝ Մագաղաթ: Գրչութիւն՝ Միջին մեսրոպեան գրութեամբ երկսիւն: Ժամանակ՝ 1066: Գրիչ՝ Գրիգոր Արկուռեցի: Տեղի՝ Սերաստիա:

Ունի Հետեւեալ կարեւոր Յիշատակարանները.

1. Թղ. 281 ա. «ՇԺԵ. Թուոյն Հայոց շրջապայիս. ես Գրիգոր քահանայ ի նուազել ազգիս Հայոց, ի ժամանակի հալածանաց մերոց յազգէն իմայելի, սահեալք ի կողմանց արեւելից ի լերանցն Այրարատայ ի գեղջէն որ կոչի Արկուռի, զկնի աստուածասէր թագաւորին մերոյ Սենեքերիմայ, եկեալ բնակեցաք ի քաղաքիս Սերաստիա, ուր քառասուն վկայքն հեղին զարինս իւրեանց, մարտ եղեալ ընդ աւերոյ դառնաշունչ եւ ընդ հնգից վախճանէր բազմաշնորհ եւ մեծապատիւ հայրն իմ Անանիա քահանայ ի թագաւորական քաղաքին ի Բիւզանդիոն ||||| Մնաց(ալ) ||||| երկու եղբարքս Գէորգ եւ Գրիգոր ի մանրական տիս. աշակերտեցաք առ ռոս երանելի տ(եառ)ն Փիլիպպոսի եւ որդւոց իւրոց Ստեփանոսի եւ Սահակայ. եւ ռոս սովորական բարեմտութեան իւրեանց եղեն անուցիչք եւ ուսուցիչք մեր յոյժ բարերար կամաւք ||||| եւ ընտոյ ռսկոյ ի զարդ պատուիրանաց տ(եառ)ն եւ ի կազմած նորին եւ ի վերայ այսր ամենայնի կայելեցին յամենասուրբ բերանոյ վարդապետութեան նորա եւ առ տենչ փափազանաց եւ աղետի սրտի թախանձեցի զտէրն իմ Սահակ բերել զտուրի կազմա-

Չեռագրիս գրչութիւնը հաւանօրէն տեղի ունեցած է Կարսի մէջ, 1064ին յառաջ, Գաղիկի փառաւորութեան օրերուն:

¹⁸ A. Tchobanian, La roseraie d'Arménie, III, Paris, 1929, p. 268—270. Նկարները հրատարակուած են բնագրի մէջ եւ արտաքոյ բնագրի, ցրիւ:

նոյս ի թագաւորական քաղաքէն եւ գրեցի զսուրբ աւետարանս իմով (ձեռօք ի վայելումն մանկանց) յիշատակ ինձ փոխանակ որդեաց եւ ժառանգութեան եւ ետու զսազկնի փոխելոյ իմոյ որդւոյ եղբար իմոյ Յոհաննիսի: . . . :

2. Թղ. 217 բ. Ես տէր Գրիգորիս ծառայ ծառայից Քրիստոսի, եղբար որդի տ(եառ)ն Ներսիսի կաթողիկոսի Հայոց, եւ որդի Չառավարի, ետու վերստին նորոգել արտաքուստ կուսէ զաստուածային աւետարանս

տեղ ի սմանէ, թողութիւն մեղաց խնդրեցէք ի տ(եառ)նէ յառաջասացելոցս, զի եւ տուիչն յիշողացտ եւ յիշեցելոցս ողորմեցի. ամէն:

3. Թղ. 82 ա. Յիշեցէք ի Քրիստոս եւ զբարեպաշտ իշխանն զմեծ սեւաստաւան՝ զԲակուրանն, զորդի Սմբատայ որդւոյ Հեթմոյ սեւաստոսի տեառն Լամբրանին եւ Պամոպեոանին, որում եւ զԱւետարանս շնորհեալսն, որում եւ զԱւետարանս ամուսնեցի. ընդ նմին եւ զՔրիստոսասէր ամուսինն իւր Թագուհի զըստ մարմնոյ քոյր իմ:



Նկար. 12. Չեռ. Թ. 76 Աթէնքի Ազգ. Մատ. ԺԲ. դար. Eigentum der Wiener Akademie. Մատթէոս Աւետարանից:

զեղեցիկ մետաքսէիւք եւ սկամբք պատուականաւք ընդելուզեալ ի մարգարտոյ մեծազնոյ ի ձեռն աստուածաբանական վարդապետի Ստեփանոսի զբան սարկաւազի տ(եառ)ն իմում, որ եւ վասն անմոլար ճանաչելոյ կոչի սա Յակոբցի: Ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց՝ նախ եւ առաջին հոգեւոր տ(եառ)ն իմոյ Ներսէսի կաթողիկոսի, որ եւ զտոյն իսկ զաւետարանս շնորհեաց ինձ ի զբաւանս եւ ի խրախճանութիւն հոգեւոր, այսու զուարճանալ եւ մի պատրանաւք անցաւոր կենցաղոյս: Արդ որք ընթեռնոյք կամ աւել-

որոյ ողորմեցի տէր Յիսուս Քրիստոս աստ եւ ի հանդերձելումն: Ի թւ. ՈՆԳ:
 Այս տեղեկութիւնները կարելի է ամփոփել այսպէս. Գրիչը Գրիգոր, ծննդեամբ Արկուռի (Ակոռի) գիւղէն, ի տիս մանկուսութեան զաղթած է Սերաստիա, Վասպուրանի մեծ զաղթին հետ (1021): Այն տեղ ուսած է առ ոտս տէր Փիլիպպոսի. ձեռք բերած է նաեւ «զգործ ոսկւոյ ի զարդ պատուիրանաց տեառն», այս ինքն մանրանկարչութեան արուեստը: Անձնական պիտոյից համար ձեռնարկած է 1066ին գրել Աւետարան

մը, առ որ կարեւոր «գառուի կազմածոյ», այս ինքն մագաղաթը ստացած է Կ. Պոլսէն: Սերաստիա այս շրջանին թէեւ բիւզանդական ազդեցութեան տակ, բայց կը նկատուէր արդէն հայաքաղաք: Թէպէտ չի յիշեր զրէշը, թէ ինչ նախադադար օրինակ ընտրած է իւր գրչութեան, բայց կարելի է ենթադրել, թէ Հայաստանէն փոխադրուած գրչագիր մը հիմ ծառայած է իւր օրինակութեան, թերեւս Գագիկ թագաւորի օրինակը, 1064 թ. գաղթականութեան հետ բերուած Ծամնդաւ-Սերաստիա: Այս կէտը հաւանական կը համարիմ, վասն զի կը տեսնուի երկու Աւետարաններու մէջ ներքին ազդեր:

Հետաքրքրական է եւ այն պարագան, որ Արկիւռեցոյ Աւետարանը ժամանակ մը յետոյ հասած է Հռոմիկայ՝ Ներսէս Ենորհաւոյ ձեռքը. իսկ սա նուիրած է զայն իւր եղբորորդւոյն Գրիգոր Ապիրատի. վերջինս ալ իր կարգին ընծայած է Լամբրոնի եւ Պապիրոնի տիրոջ Բակուրան Սեւաստոսին, 1194ին: Այսպիսի ճանապարհներով ահա հասած է Աւետարանս Մլիճի կամ Սկեւոյի վանքը, ճիշդ այն ժամանակ, երբ Ստեփանոս Ազամբարի խորհուրդը ունեցած է օրինակել տալ անձնական պիտոյից համար շքեղ Աւետարան մը: Նոյն 1194 թուին (կամ տարի մը յտաջ) կ'օրինակէր նաեւ Կոստանդին Ներսէս Լամբրոնացոյ Աւետարանը: Եթէ Կոստանդինի ոչ, բայց Գրիգոր Մլիճեցոյ Աւետարանը ունեցած է իրեն գաղափար օրինակ Արկիւռեցոյ Աւետարանը թէ բնագրին եւ թէ նկարազարդութեան համար: Ենացեալ կնոջ պատմութիւնը, որ հին ձեռագիրներու մէջ այնպէս յաճախ չի տեսնուիր, կը գտնուի Արկիւռեցոյ եւ Մլիճեցոյ Աւետարաններուն վերջը (Արարատ, 1910, էջ 79). նաեւ նկարներու մեծ նոյնութիւն կը նկատուի երկուքին մէջ (հմմտ. անդ, էջ 245—260):

Արեւելեան կամ Մեծ Հայաստանի մանրանկարչութեան ազդեցութիւնը Կիլիկիանին վրայ չօղափելի է ոչ միայն Սկեւոյի արտագրութիւններուն մէջ, այլ եւ աւելի վաղ հռչակուած Դրագարկի դպրոցին գործերուն մէջ:

Դրագարկ արդէն Ժ. Գարու առաջին կէսին երեւան բերաւ փայլուն նմոյշներ հայ մանրանկարչութեան ի նպաստ: J. Strzygowski ծանոթացուց անոր մէկ հոյակապ արտագրութիւնը 1113 թուականին¹⁹:

¹⁹ Kleinarmenische Miniaturmalerei, Die Miniaturen des Tübinger Evangeliari Ma XIII, 1 vom Jahre 1113 bzw. 893 nach Christi. Tübingen 1907. Չեռագրին յիշատակարանը ծանօթ էր միայն Էնֆիաձեանի ընդօրինակութեամբ. իսկապիւր կը համարուէր կորսուած: Հանդ. Ամս. 1917/18, էջ 159—160, մտադիր ըրած էի, որ Յիշատակարանին իսկապիւր պահուած է Սաշիկ Վ. Դաղեանի ձեռագիրներու հաւաքածոյին մէջ եւ հրատարակուած է նմանհամութեամբ Գարեգին սրբազանի «Քարտէզ հայ հնագրութեան» գործին մէջ (Վաղարշապատ, 1912, էջ 48 եւ Տախտակ Ղ. Բ): իսկ երկրորդ յիշատակարանի պատ-

Կարեւոր կէտ մըն է հայ մանրանկարչութեան պատմութեան համար մանր մատնանշել յարաբերութեան այն գիծերը, որոնց վրայէն Կիլիկիան արուեստը առեւտուրի մէջ ապրեցաւ Մեծ Հայաստանի հետ: Առանց տարակուսի ի սկզբան Հայաստանն էր որ կուտար, երկրէն անջատուող գաղթականներու միջոցաւ: Կիլիկիա հաստատուող գաղթականները թէպէտ չըջապատուած էին օտար ժողովուրդներէ, բայց պահեցին երկար ժամանակ հին աւանդութիւններն եւ սովորութիւնները. ինչպէս շինարուեստը արեւելեան ճաշակով դարգացաւ հոն, նոյնպէս մանրանկարչութեան համար յարգուեցաւ արուեստի արեւելեան նկարապիւրը: Արեւելք ունէր ազդեցիկ ձայն Հռոմիկայի կաթողիկոսարանին մէջ. եւ ահանաւոր վարդապետներ, ինչպէս Մխիթար Գոշ, Վարդան եւ Դաւիթ Հաղբատացիներ կ'այցելէին Կիլիկիա ուսանելու, այլ եւ ուսուցանելու: Ներսէս Ենորհաւի, Գրիգոր Տղայ կը թղթակցէին Սանահինի եւ Հաղբատի վարդապետներու հետ եւ կ'ուղղէին թուղթեր Կարսեցիներուն:

Այս յարատեւ տուրեւաւր գաղափարներու բերաւ իրեն հետ փոփոխակի ազդեցութիւններ: Ինչպէս Արեւելք պարսիկ դրացիէն, նոյնպէս Կիլիկիա Բիւզանդիոնէն եւ Արեւմուտքէն ընդունեցան նոր ազդեցութիւններ, որոնց համաձուլումը Տաւրոսի բարձրաւանդակի վրայ ստեղծեց հայ արուեստի վերածնութիւնը, կամ տուաւ անոր առայդ ազդակներ: Մանրագին հետադասութեան պէտք կայ, երեւան բերելու համար օտար ազդեցութիւններու շերտերը, եւ ինքնուրոյն արուեստի յատկանիշները վերածնութեան այս դարուն:

Սկեւոյի Դպրոցը Դրագարկի դպրոցէն ետքը երկրորդ տեղը կը բռնէ Կիլիկիան արուեստի մէջ: Արեւելեան այն գիծերը, որոնք նկատած էր Strzygowski Դրագարկի Աւետարանին մէջ, նոյն եւ առաւելագոյն չափով կը տեսնուին Սկեւոյի ստեղծագործութիւններու մէջ:

Սկեւոյի եւ Մլիճի վանքերը, ուր ծնունդ առած է մեր Աւետարանը, երկուքոյր վանքեր են Տաւրոսի բարձունքին վրայ, Պապեոնի եւ Լամբրոն բերդերու հովանաւորութեան տակ, Լամբրոնի տէրերու ձեռքը: Անոնք զարգացան եւ անուանի եղան յատկապէս Ներսէս Լամբրոնացոյ ջանքերով: Ինչպէս տեսանք, 1193ին հոս Սկեւոյի մէջ կ'օրինակէր եւ կը նկարազարդէր Լամբրոնի տիրոջ եւ անոր եղբոր Ներսէս Լամբրոնացոյ համար Աւետարան մը Կոստանդին գրիչ եւ նկարիչ: Կոստանդինին ժամանակակից է, եւ թերեւս աշակերտակից Գրիգոր Մլիճեցի,

ճենը, զոր ներկայացուցած է Էնֆիաձեան, որուն համաձայն Չեռագրին գաղափար օրինակ ծառայած է 893 թուէն Աւետարան մը, կեղծիք է:

մեր 1197 թուի Աւետարանին գրիչն եւ նկարիչը: Ինչ որ Կոստանդին նկարիչ Ներսէս Լամբրոնացոյ ճաշակին գոհացում տալու համար կը ստեղծագործէր, նոյնը ուրիշ կերպարանքով կը կրկնուէր անոր մրցակիցին պարանքով կը կրկնուէր անոր մրցակիցին Գրիգորի վրձինին տակ: Չի կրնար ժխտուիլ թէ Կոստանդինի Աւետարանը ծանօթ չէր

տեւոյնը եւ հոն աւանդութիւններուն, աւանդապահներ հին արուեստին: Ունին նկարչութեան բնածին ձիրքեր, ոգեւորուած թիւն, «աստուածային արուեստ», բայց կը թարգեան աւանդութիւնը, զայն կատարելաբար կը նկարին եւ ոչ արհամարհել եւ գործել կը նկարին եւ ոչ արհամարհել եւ առաջուր կոխել: Արեւելեան արուեստի հետքերը կը նշմարուին անոնց նուրբ ստեղ-



Նկար. 13. Ձեռ. 57 Աթէնքի Ազգ. Մատ. ԺԱ. դար. Մարկոս Աւետարանիչ: Eigentum der Wiener Akademie.


Գրիգորին: Բայց Գրիգոր իւր օրինակութեան գաղափար ընտրեց հնագոյն մը, ուղղակի Արկիւռեցոյ օրինակը, որ նոր էր բերուած Մլիճի կամ Սկեւոյի վանքը: Այս կը բուռնաւորէր այն նմանութիւններէն, որ կան երկուքի մէջ: Մլիճեցիին սակայն պարզապէս արտագրող մը չէրաւ իւր գաղափար օրինակին, այլ կատարելագործեց անոր արուեստը քայլով մ'աւելի: Բայց թէ Կոստանդին եւ թէ Գրիգոր հե-

ճագործութիւններուն մէջ ամէն քայլափոխին: Փոխառութիւն է ամբողջ կառուցուածքը. բայց նոր, արուեստը, նուրբ ճաշակը, ինքնուրոյն շնորհքը, անհատական յորինուածքը: Ես չունիմ այս բոլորի առաջ օրինակներ այն հին մանրանկարներէն, որոնցմէ մեծ թիւ մը առարկայ եղած էր իմ գնութեան Երեւանի եւ Էջմիածնի Մատենադարաններու մէջ, որպէս զի մատնացոյց ընեմ այլ եւ այլ

պատկերագծեր, որոնք կը կրկնուին Սկեւոայի դպրոցի գործերու մէջ: Բայց մեր նպատակի համար բաւական կարող են ըլլալ նաեւ հրապարակի վրայ ծանօթները: Պիտի ուղէի յիշեցնել Գագիկ թագաւորի եւ Գր. Արկուեցեոյ Աւետարանին մանրանկարները, որոնք ներկայացուցած են Չօպանեան եւ Յովսէփեան:

Թ. 8 նկարին հետ պէտք է համեմատել Արկուեցեոյ Աւետարանին Մարկոսի սկզբնաղագրը, զոր Գարեգին Յովսէփեան այս-

րածուած է մինչեւ առաջին ոտները: Առիւծը առաջին ձախ թաթով բռնել է ոսկեկող, ահանազու աւետարան: Գլխին լուսոյ պսակ ունի: Վեր բարձրացրած թեւերի մէջ կանգնած է անմօրուս եւ գլխի երկար մազերով մի պատանի, որ ձախ ոտքը դրել է առիւծի գլխին, իսկ աջը ազդրների վրայ, տարածած ձեռքերով բռնել է առիւծի երկու թեւերը: Պատանին հագել է մոյգ կապոյտ կապայ եւ աջ ուսից դէպի ցած սպիտակաւուն՝ աւելի ճիշդ գորշ վերնազգեստ. աջ թեւին՝ ուսին



Eigentum der Wiener Akademie.
Նկար. 14. Չոպ. 163. Աթէնքի Ազգ. Մատ. ԺԲ. դար.
Ղուկաս Աւետարանիչ:

պէս կը նկարագրէ. «Առիւծի աջ թեւն սկսուած է պարանոցի եւ ուսի սահմանից եւ ժապաւէնի նման նախ դալարուած է մէջքի վրայով դէպի ցած, անցնում յետեւի ոտների միջով եւ վեր բարձրանում, կազմելով «Ս» տառի մի կողմը, միւս թեւը ուղղակի վեր է բարձրանում նոյն տառի միւս կողմը կազմելու համար: Առիւծի բարձրացրած գլուխը մարմնի հետ եւ աջ թեւի ներքին մասը Ս-ի կողքերը միացուող կամարն են կազմում: Առիւծի պոչը կախ է ընկած եւ երկու ոտների մէջից անցնելով՝ փորի տակից տա-

մօտ, ունի ոսկի ժապաւէն, իշխանական նշանը: Գլխին ունի լուսոյ պսակ, կարմիր խաչով, մի կողմից «Յիսուս» եւ միւս կողմից «Քրիստոս» գրած» (Արարատ, 1910, էջ 247—248): Մեր մանրանկարիչը արտադրած է զայն զոյգն փոփոխութեամբ միայն: Ուշագրաւ է նաեւ կարսի Աւետարանին այն խորանը, ուր առձուակաւորը խոյակներ եւ պայտածեւ կամարներ կը տեսնուին (Չօպանեան՝ La roseraie, III, էջ 105). անոնք կրկնուած են մեր Թ. 2. նկարին մէջ զոյգն փոփոխութեամբ: Նոյն զարգածեւերը կը

նկատուին գրեթէ նոյնութեամբ նաեւ կերան թագուհւոյն 1272ի Աւետարանին (La roseraie, II, էջ XVI) եւ այն խորանին մէջ, զոր Strzygowski հրատարակած է իրրեւ մասն մեր 1197ի Աւետարանին (Asiens bildende Kunst, Augsburg, 1930, էջ 142): Այսպէս նաեւ էջ-միւսին 1053 թուականին Աւետարանի խորանը (La roseraie, III, p. 162) իւր եռաստեղ գերաններով ունի իր նմանութիւնը մեր Թ. 3—4 նկարներու մէջ: Նաեւ այլ զարգարանքները համեմատ են ոչ միայն նախորդ շրջանի հայ մանրանկարչութեան աւանդութիւններուն (հմմտ. Հաղբատի եւ Դրագարկի


նոր հնարագիտութիւններով եւ նրբութիւններով. այս տեղ կը գործէ իր անձնական ճաշակը: Ինքնուրոյն գծերը իր մանրանկարներուն երեւան պիտի ելլէ մանրագին համեմատութեամբ իր վրձինի արտազրուութիւններու եւ նախորդ շրջանի, յատկապէս Արկուեցեոյ, Դրագարկի դպրոցի եւ Կոստանկուեցեոյ, Դրագարկի դպրոցի եւ Կոստանկուեցեոյ գործերուն: Անհրաժեշտ է մանր ուղին գործերուն: Միւս կողմէ Նարեկը եւ 1215ին սուսնասիրել Միւս կողմէ Նարեկը եւ 1215ին նկարագրող Աւետարանը:

Ինչպէս Գրեգոր Միւս կողմէի ազդուեցաւ իւր նախորդներէն, նոյնպէս ինքը իր կարգին իւր նախորդներուն վրայ: Կիլիկեան մանրագրեց յաջորդներուն վրայ: Կիլիկեան մանրագրեց յաջորդներուն վրայ:



Eigentum der Wiener Akademie.
Նկար. 15. Չոպ. Թ. 68 Աթէնքի Ազգ. Մատ. ԺԲ. դար.
Ղուկաս Աւետարանիչ:

մանրանկարները), այլ եւ արեւելեան քանդակագործերու: Թ. 1 նկարին գալարուած դակարգերու մէջ Strzygowski, Amintունով վիշապներու մէջ Ամիդայի վրայ վրձնապներու, որոնք Ամիդայի, Բաղդատի եւ ուրիշ արեւելեան յուշարձաններու վրայ կը նկատուին (հմմտ. Berchem, Amida, էջ 82—84 եւ Յովսէփեան, Պոռնուսը կամ Սաղբակեանք, Ա., Վաղարշապատ 1928, էջ 166—171): Խորաններու, կիսախորաններու, լուսանցաղարդերու եւ զարդազարդութեան մէջ ըստ մեծի մասին հետեւող է մեր նկարիչը հին աւանդութիւններուն. կը զարգացնէ ծանօթ



Eigentum der Wiener Akademie.
Նկար. 16. Չոպ. 93 Աթէնքի Ազգ. Մատ. ԺԲ. դար.
Յովսէփեան եւ Պրոխոր:

րանկարչութեան ամենափայլուն դէմքը՝ Թորոս Ռոսլին, Հոռմկլայի Դպրոցէն, որ հայկական արուեստը բարձրացուց զասական կատարելութեան, գերծ չմնաց այս ազդեցութիւնէն. նա, համաւորէն, Սկեւոայի դպրոցին աշակերտելով հասաւ անմրցելի վարպետութեան: Այսպէս նաեւ ուրիշներ: Իրրեւ տունակ նմանողութեան կը յիշեցնեմ Կեոան թագուհւոյն Աւետարանը (1274): Կիլիկեան մանրանկարիչները որ չափով որ ճախրանք ցոյց տուին դէպի զարգացում խարճը, նոյն առաւելութեամբ չզարգացան նկարներ յօրինելու արուեստին մէջ անկախաբար: Անոնք մնացին ընկճուած բիւ-

